10.53587/25792865-2023.9-32

ՀՀ-ՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարությունյան Ա.Ա., Մովսիսյան Շ.Ա.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հոդվածում ներկայացվել է հեղինակային և հարակից իրավունքների ոլորտի օրենսդրական կարգավորումների կիրարկման համատեքստում առկա բացթողումների վերաբերյալ վերլուծություն՝ ՀՀ-ում դատական փորձաքննությունների անցկացման շրջանակներում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ թյուր պատկերացումները և ՀՀ-ում առկա օրենսդրական կարգավորումների ոչ ամբողջական լինելը հաճախ հետևանք են դառնում օրինախախտումների: Այս ոլորտում կատարվող դատական փորձաքննությունների հիմնական խոչընդոտները շարունակում են մնալ տվյալների ձեռքբերումը և տրամադրված նյութերի անբավարարության փաստը: Վերլուծության արդյունքում նախանշվել է հասարակությանը կամ իրավատերերին իրենց իրավունքների մասին իրազեկման կարևորության մասին (պարզաբանումների հրապարակման, դասընթացների կազմակերպման և այլն): Հոդվածում նախանշվել են նաև ոլորտին առնչվող մի շարք խնդիրներ, որոնք ծագում են, մասնավորապես՝ հեղինակային իրավունքի խախտման փաստերի հիմքով վնասի չափի որոշման դատական փորձաքննության ընթացքում:

Բանալի բառեր. *հեղինակային և հարակից իրավունք, սեփականության իրավունք, մտավոր սեփականություն, վնասի չափի որոշում, ապրանքային նշան, ապօրինի օգտագործում:*

Հեղինակային իրավունքը մտավոր սեփականության առանձնահատուկ ինստիտուտ է: Այդ ինստիտուտի նորմերով կարգավորվում են մարդու մտավոր գործունեության արդյունք հանդիսացող ստեղծագործական արժեքների ստեղծման կապակցությամբ առաջացող, միմյանց հետ անխզելիորեն կապված և միմյանց պայմանավորող գույքային ու անձնական ոչ գույքային քաղաքացիաիրավական հարաբերություններ:

Հայաստանի Հանրապետությունում հեղինակային իրավունքի պաշտպանությունն իրականացվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներին համապատասխան, մասնավորապես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ գլխով, ՀՀ քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածով, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 52-րդ գլխով, ՀՀ կառավարության 11.01.2007թ.

Թղթակցական հասցեն՝ Հարությունյան Աննա Աշոտի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ապրանքագիտական բաժնի փորձագետ, Հայաստան, ք. Երևան, Իսակովի պող., 24, e-mail: ah-ets@mail.ru

«Հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերի մասին» N 506-Ն որոշմամբ և այլն:

Վերոնշյալ հարաբերությունների առանձնահատկությունը դրսևորվում է նախ և առաջ նրանում, որ դրանք առաջանում են ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների ստեղծման փաստի ուժով, անկախ ստեղծագործության նշանակությունից, արժանիքներից և արտահայտելու եղանակից: Հեղինակային իրավունքի ծագման համար չի պահանջվում ստեղծագործության գրանցում կամ որևէ այլ ձևականություն:

«Հեղինակային իրավունք» հասկացության հիմքում դրվում է ստեղծագործության հեղինակի անձը, ինչն ընդգծում է բազմաթիվ երկրների օրենսդրություններում ամրագրված այն փաստը, որ հեղինակը որոշակի իրավունքներ ունի իր ստեղծագործության նկատմամբ, օրինակ՝ խոչընդոտել դրա անօրինական օգտագործումը և թույլ տալ օգտագործել երրորդ անձի կողմից՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում [1, էջ 66]: Տվյալ փաստը ամրագրված է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, որում սահմանված է, որ հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց դրա օգտագործումը: Իրավատերը կարող է այլ անձի հանձնել որոշակի սահմաններում ստեղծագործությունն օգտագործելու թույլտվություն (լիցենզիա) [2, հոդվածներ 1124, 1125]:* Այսպիսով, հեղինակային իրավունքների ճիշտ ձևակերպումը կարևոր է ոչ միայն հեղինակի՝ վարձատրություն ստանալու հնարավորության ապահովման առումով, այլ նաև սեփականության իրավունքների և ստեղծագործության օգտագործման իրավունքի փոխանցման փաստի օրենսդրական պահանջներին համապատասխան հաստատման համար:

Հասարակության իրավագիտակցության բարձրացումը տարիների ընթացքում հանգեցրել է որոշակի պահանջատիրական վերաբերմունքի ձևավորման, ինչի արդյունքում ձևավորվել է կայուն պահանջարկ հեղինակային և հարակից իրավունքների և մտավոր սեփականության օբյեկտների փորձաքննությունների կատարման նկատմամբ առհասարակ, ինչի անթաքույց ապացույցն է ժամանակի ընթացքում տվյալ ոլորտին առնչվող փորձաքննությունների քանակի ավելացումը: Քանակի ավելացմանը զուգընթաց էականորեն նկատելի է դառնում նաև իրավական կարգավորում պահանջող հարցերի լուծման բնույթային փոփոխությունը: Այսպես, մտավոր սեփականության օբյեկտների, մասնավորապես՝ հեղինակային և հարակից իրավունքների խախտման փաստով պայմանավորված քրեական և/կամ դատական վարույթների շրջանակներում լուծում պահանջող հարցերը հիմնականում առնչվում են իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի չափի մեծության հաշվարկմանը և իրավունքի գրանցման փաստի իրավաչափ լինել/չլինելու արդյունքում առաջացած օրինախախտման արդյունքում պատճառված վնասի չափի հաշվարկմանը: Ցանկացած դեպքում մտավոր սեփականության փորձաքննությունների կատարումը պետք է ուղեկցվի գործի բոլոր հանգամանքների ուսումնասիրությամբ պարզված՝ վնասի հաշվարկման համար ի հայտ եկած լիարժեք և բավարար փաստերի համադրմամբ և վերլուծությամբ: Հեղինակային և հարակից իրավունքների փորձաքննությունների կատարումն իրենից

* ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 1124, 1125

ենթադրում է որոշակի առանձնահատուկ մոտեցում կատարվող վերլուծություններին, քանի որ հաճախ են ի հայտ գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են առաջադրված չլինել փորձաքննություն կատարելու մասին կայացված որոշմամբ, սակայն գործի լիարժեքության ապահովման համար կարող են ունենալ էական նշանակություն և ենթակա լինեն պարզման քրեական և/կամ դատական վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Հեղինակային իրավունքի հաջորդ առանձնահատկությունը *ստեղծագործության և ստեղծագործ անձի միջև առաջացող անքակտելի կապն է:* Ստեղծագործության ստեղծման փաստի ուժով ստեղծագործողի համար առաջանում են անձնական ոչ գույքային անօտարելի իրավունքներ, որոնք բնութագրում են նրա՝ որպես նման արժեք ստեղծողի անհատականությունն ու արժանիքները: Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները՝ հեղինակության իրավունքը, անվան իրավունքը, ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը անժամկետ իրավունքներ են, և դրանցից հրաժարվելու մասին հեղինակի հայտարարությունը կամ մեկ այլ անձի հետ կնքված համաձայնությունն առոչինչ է [3, էջ 27]:

Վերջապես՝ հեղինակային իրավունքի հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ունի գործողության տարածքային սահմանափակություն և ի տարբերություն այլ սուբյեկտիվ իրավունքների, գործում է այն երկրի տարածքում, որտեղ ստեղծվել է: Մեկ երկրում առաջացած հեղինակի սուբյեկտիվ իրավունքները, որպես կանոն, «էքստերիտորիալ» բնույթ չունեն: Օրինակ, եթե մի երկրում գույքի նկատմամբ առաջացած սեփականության իրավունքն ապահովում է այդ իրավունքի ճանաչումը նաև այլ երկրներում, ապա գիտության, գրականության, արվեստի նկատմամբ նմանօրինակ իրավունք այլ երկրներում չի առաջանում [4, էջ 25]:

Երկար ժամանակ մեր երկրում պատշաճ ուշադրություն չէր դարձվում մտավոր սեփականության պաշտպանությանը, ինչի պատճառով տեղի էին ունենում տարատեսակ իրավախախտումներ, որը հանգեցնում էր մեր երկրում հեղինակների ստեղծագործական աշխատանքի սահմանափակ կատարման և/կամ առհասարակ չկատարման:

Չնայած այն հանգամանքին, որ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանությունը տրամադրվում է ավտոմատ կերպով և կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից և որևէ այլ գործողության կատարումից, այնուամենայնիվ, շատ երկրներ իրենց ազգային համակարգերում ստեղծագործությունների կամավոր գրանցման կամ ի պահ հանձնման հնարավորություն են նախատեսում: Այդ համակարգերը, օրինակ, հեշտացնում են ստեղծագործության հեղինակի և սեփականատիրոջ միջև վեճերի լուծման, ֆինանսական գործարքների, վաճառքի, իրավունքների զիջման կամ փոխանցման հարցերը:

ՀՀ–ում այդ գործառույթն իրականացնում է «ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ» հասարակական կազմակերպությունը, որն, ըստ էության, գրանցվել և սկսել է գործունեություն ծավալել 2001թ. հունվարի 19-ին ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի թիվ 119 որոշումով [5]:

Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները և նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են հեղինակային իրավունքի մասին ՀՀ օրենքներով տրամադրվող իրավունքներից: Նրանք օգտվում են իրենց ստեղծագործություններն օգտագործելու կամ երրորդ անձանց

փոխհամաձայնեցված պայմաններով դրանց օգտագործման թույլտվություն տալու բացառիկ իրավունքներից: Ստեղծագործության իրավատերը կարող է արգելել կամ թույլատրել.

- ստեղծագործության վերարտադրումը ցանկացած ձևով, ներառյալ դրա տպագրությունն ու ձայնագրությունը, ստեղծագործության հրապարակային կատարումը և հանրությանը հաղորդումը,
- ստեղծագործության հեռարձակումը, ստեղծագործության թարգմանությունն այլ լեզուներով,
- ստեղծագործության հարմարեցումը, ինչպես, ասենք, վեպի հարմարեցումը ֆիլմի էկրանավորման նպատակով [6, հոդված 227, 2, հոդված 1124]:

Հեղինակությունը յուրացնելը կամ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը իրացնելը համարվում է քրեորեն պատժելի արարք [6, հոդված 227]:

ՀՀ-ում իրավախախտումների դեպքում հեղինակն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է դիմել դատարան, իսկ եթե հեղինակը կոլեկտիվ կառավարող համապատասխան կազմակերպության անդամ է, ապա նրա անունից դատարան կարող է դիմել տվյալ կազմակերպությունը՝ որպես նրա ներկայացուցիչ, և իրավունքները խախտողից պահանջել.

– իր իրավունքների ճանաչում, եթե իրավախախտողը ժխտում կամ չի ճանաչում նրա իրավունքները,

– իր իրավունքը խախտող գործողությունների կասեցում, եթե դեռ շարունակվում է խախտում պարունակող գործողությունը,

– նմանակված օրինակների և դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավում կամ ոչնչացում,

– իրեն պատճառված վնասի հատուցում օրենքով սահմանված կարգով,

– փոխհատուցում հոնորարի կամ այն վարձատրության կրկնակի չափով, որը իրավատերը կստանար օբյեկտի օրինական օգտագործման համար, կամ փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցումբներառյալ բաց թողնված օգուտը:

Հարկ է նշել, որ հեղինակային և հարակից իրավունքների խախտման մասով վնասի չափը որոշվում է դատարանի կողմից նախաձեռնված համապատասխան փորձագիտական եզրակացության հիման վրա:

Տեխնիկայի և գիտության անընդհատ զարգացման շնորհիվ այսօր ի հայտ են եկել ստեղծագործությունների օգտագործման նոր եղանակներ ու միջավայր, օրինակբ թվային միջավայրը, ինտերնետը, որը մի կողմից հրաշալի հնարավորություն է ստեղծագործությունների տարածման և ճանաչման համար, մյուս կողմից պարարտ հող է ապահովում իրավախախտումների համար: Սա հատկապես ակնհայտ է հեղինակային իրավունքի օբյեկտների առնչությամբ, որոնց թվում առաջատար տեղերից մեկը զբաղեցնում է ծրագրային ապահովումը: Ներկայումս շուկայական հարաբերությունների զարգացման շնորհիվ ծրագրային ապահովման իրավական պաշտպանությունը գնալով ավելի կարևոր է դառնում: Այդ միջավայրում ցանկացած անձ, ցանկացած վայրից և ցանկացած պահին կարող

է իրեն հասանելի դարձնել ինտերնետային կայքերում տեղադրված գրական գործերը, էլեկտրոնային գրադարանները, երգերը, ֆիլմերը, տեսահոլովակները: Այսպիսի օգտագործման դեպքում տարածքային սահմանները վերանում են և չափազանց դժվար է հետևել ստեղծագործության «ճամփորդությանը», առավել ևս՝ խախտումներին:

Հարկ է նշել, որ հասարակության գիտակից վերաբերմունքը դեպի մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանություն՝ առավել հեշտացնում է իրավախախտների հայտնաբերումն ու դրանց հետագա կանխումը: Հատկանշական է, որ վերջին տարիներին ձևավորվել է մտավոր սեփականության օբյեկտների, մասնավորապես՝ հեղինակային և հարակից իրավունքների պաշտանության օբյեկտների դատական փորձաքննությունների կատարման կայուն պահանջարկ, հատկապես՝ ծրագրային ապահովումների ապօրինի օգտագործման, գրքերի՝ առանց հեղինակի թույլտվության տարածման, հեղինակային զարդերի ապօրինի կրկնօրինակման, տարածման և այլն, որոնց շրջանակներում հիմնականում խնդիր է դրվում պարզելու մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ նշված ստեղծագործությունները հանդիսանու՞մ են արդյոք հեղինակային իրավունքով պաշտպանման ենթակա օբյեկտներ, թե՝ ոչ, եթե այո, ապա անհրաժեշտ է լինում հաշվարկել համապատասխան օբյեկտների մասով պատճառված վնասի չափերը: Հեղինակային իրավունքների վերաբերյալ թյուր պատկերացումները և ՀՀ-ում առկա օրենսդրական կարգավորումների ոչ ամբողջական լինելը հաճախ տեղիք են տալիս մեկ այլ օրինախախտման՝ հեղինակային իրավունքով պաշտպանման արտոնագիր են ստանում այնպիսի օբյեկտներ, որոնք բնավ էլ չեն հանդիսանում հեղինակային իրավունքով ծագած և պաշտպանման ենթակա:

Նախանշվել են ոլորտին առնչվող հետևյալ հիմնական խնդիրները.

1. Հեղինակային իրավունքի օբյեկտ համարվող ստեղծագործության ստեղծման փաստով պայմանավորված իրավունքի ծագման իրավաչափության գնահատման հարցի պարզումից հետո անհրաժեշտության դեպքում պատճառված վնասի չափի որոշում,
2. ապրանքային նշանի նկատմամբ հեղինակային իրավունքի գրանցման հայտը մերժելը, պատճառաբանելով, որ տվյալ ապրանքային նշանի մեջ կան հեղինակային իրավունքով պաշտպանման ոչ ենթակա տարրեր, այն ինչ ընդհանուր վերցված տվյալ ապրանքային նշանը կարող է ենթակա լինել հեղինակային իրավունքով պաշտպանության՝ իր մեջ ներառելով հեղինակային իրավունքով չպահպանվող տարրեր, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում ընկերությանը պատճառված վնասի չափը որոշել,
3. հեղինակային իրավունքով պաշտպանված ապրանքներին շփոթության աստիճանի նմանակների վաճառքի արդյունքում պատճառված վնասի չափի որոշում:

Առկա դատական պրակտիկան որոշակի պատկերացում է տալիս, թե ինչպես պետք է պաշտպանել հեղինակային իրավունքը, ինչ փաստարկներ օգտագործել պաշտպանելու համար և ինչ փաստաթղթեր կազմել մինչև դատավարության մեկնարկը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դատական պրակտիկայում հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրները և դատական փորձաքննությունների կատարման համար անհրաժեշտ և բավարար նյութերի տրամադրման խնդիրները դեռ գտնվում են սաղմնային վիճակում: Այս ոլորտում

կատարվող փորձաքննությունների հիմնական խոչընդոտները շարունակում են մնալ տվյալների ձեռքբերումը և տրամադրված նյութերի անբավարարության փաստը:

Հայտնի է, որ օրենքը կիրարկողը մի կողմից իրավատերերն են, մյուս կողմից օգտագործողները: Իրավախախտումների դեմ պայքարը ցանկալի արդյունք չի տա, քանի դեռ թերի է «հեղինակ/իրավատեր – օրենք – օգտագործող» կապը: Օրենքի առաջնահերթ խնդիրը իրավատերերի շահերը պաշտպանելն ու նրանց նյութապես ապահովելն է: Գիտակցաբար ճանաչելով հեղինակի իրավունքներն իր ստեղծագործության նկատմամբ և այդ ստեղծագործության օգտագործման համար՝ նրան վճարելով հասանելիք օրինական վարձատրությունը՝ դրանով իսկ ապահոված կլինենք նրա անձի հանդեպ հարգանքի երաշխիքը: Այս իմաստով խիստ կարևոր են իրավատերերին և հասարակության լայն շրջաններին այդ իրավունքների մասին իրազեկելը, օրենքի նկատմամբ հարգանք ձևավորելն ու զարգացնելը, ստեղծագործություն օգտագործողների վերաբերմունքը հեղինակների հանդեպ արմատապես փոխելը, մտավոր սեփականության օբյեկտների օգտագործմանն առնչվող գործարարների շրջանում բացատրական աշխատանքները, օրենքի կարևոր դրույթների պարզաբանումները, իրավապահների ու դատական համակարգի համար դասընթացներն ու կադրերի վերապատրաստումը, այլապես որքան էլ իրավական դաշտը հագեցած լինի միջազգային փաստաթղթերով, պատասխանատվության զգացումի ու հեղինակի իրավունքների հանդեպ հարգանքի բացակայության պարագայում օրենքը լիարժեք չի կիրարկվի:

Գրականության ցանկ

1. Ղանթարջյան Ս.Լ. Մտավոր սեփականության առանձնահատկությունները և իրացման ձևերը/ Բանբեր Երևանի համալսարանի, Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, № 3 (18), 2015, էջ. 65-72:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658
3. Բարսեղյան Տ.Կ. Մտավոր սեփականության իրավունք, Ուսումնական ձեռնարկ / ԵՊՀ հրատ., 2002:
4. Гаврилов Э.П., Гарибян А.М. Авторское право на произведения науки, Ер.: Изд-во АН Арм ССР, 1975, - 195с..
5. https/:/www.armauthor.am/rightholders/about-us.html.
6. ՀՀ Քրեական օրենսգիրք https/:/www.arlis.am/documentview.aspx?docID=110893:

В КОНТЕКСТЕ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОСОБЕННОСТИ ПРОВЕДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ СУДЕБНЫХ ЭКСПЕРТИЗ ПО АВТОРСКИМ И СМЕЖНЫМ ПРАВАМ

Арутюнян А.А., Мовсисян Ш.А.

В статье, в рамках проводимых судебных экспертиз в Республике Армения, дан анализ наличествующих упущений законодательного урегулирования сферы авторского и смежных прав. Отмечается, что неверное представление об авторских правах и

неполнота действующих правовых норм в Республике Армения чревато последствиями часто приводящими к правонарушениям. Обосновывается мысль о том, что основными препятствиями для проведения судебных экспертиз в рассматриваемой сфере продолжают оставаться - получение необходимой информации и неполноценность предоставленных на экспертизу материалов. Авторы, в результате анализа, приходят к выводу о важности информирования общественности или правообладателей об их правах (посредством публикаций разъяснений, организаций тренингов и т.д.). В качестве исследовательской задачи в статье обозначены ряд проблем, относящихся к данной сфере экспертного исследования, которые возникают, в частности, при проведении судебной экспертизы с целью определения размера ущерба по фактам нарушения авторских прав.

Ключевые слова: *авторские и смежные права, имущественные права, интеллектуальная собственность, определение возмещения убытков, товарный знак, незаконное использование.*

FEATURES OF CONDUCTING FORENSIC EXAMINATIONS ON COPYRIGHT AND RELATED RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF LEGAL REGULATION

Harutyunyan A., Movsisyan Sh.

This article introduces an analysis of existing gaps in the legislative regulation of the sphere of copyright and related rights within the framework of forensic examinations in the Republic of Armenia. It is noted that misconception of copyright and incompleteness of existing legal norms in the Republic of Armenia often lead to infringements. The main obstacles to the conduct of forensic examinations in this sphere continue to be receiving the necessary information and also the fact that the provided materials are insufficient. As a result of the analysis the authors conclude that it is essential to inform the public or rights holders about their rights (through the publication of clarifications, organization of trainings, etc.). The article also outlines a number of problems related to the field which arise, in particular, during the forensic examination to determine the amount of damages for copyright infringement.

Keywords*: copyright and related rights, property rights, intellectual property, determining the amount of damages, trademark, illegal use.*

Ներկայացվել է խմբագրության 02.04.2023
Ընդունվել է տպագրության 19.06.2023